

(նշել ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, աշխատանքի վայրը և հասցեն)

ով աշխատում է _____

(նշվում է ֆիզիկական անձի աշխատավայրի լրիվ անվանումը, հասցեն)

այսուհետ՝ «Զբոսաշրջիկ», մի կողմից, և «Գառնիկ Ուլիխանյան» ԱԶ-ն, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից (այսուհետ երկուսը միասին կանվանվեն Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով կատարողը պարտավորում է Զբոսաշրջիկի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Զբոսաշրջիկը պարտավորվում է վճարել այդ Ծառայությունների համար:

1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ Ծառայությունները՝

1.2.1. Տեղաբաշխել (տեղավորել) Զբոսաշրջիկին հետևյալ վայրում՝ (մանրամասն նշվում է կոնկրետ երկրի մարզում, քաղաքում, համայնքում կամ այլ բնակավայրերում գտնվող հյուրանոցային տնտեսության օբյեկտի լրիվ անվանումը, ամբողջական հասցեն, տեսակը և կարգը)

(զբոսաշրջային փաթեթի սկզբի և ավարտի ժամկետները (տարի, ամիս, օր), հյուրանոցային տնտեսության օբյեկտ սպառողի մուտքագրման և ելքագրման ժամկետները (տարի, ամիս, օր, ժամ).)

1.2.2. Ապահովել Զբոսաշրջիկի շրջագայությունը հետևյալ երթուղով.

(մանրամասն կոնկրետ օրերով նշվում է Զբոսաշրջիկի շրջագայության երթուղին, նրա գտնվելու կոնկրետ վայրից ըստ մեկնման և ժամանման վայրերի (ներառյալ տեսարժան վայրերը շրջագայության ընթացքում, մինչև գիշերակացի անհրաժեշտության դեպքում այն ապահովող հյուրանոցային տնտեսության օբյեկտների լրիվ անվանումը, ամբողջական հասցեն, տեսակը և կարգը) և նախնական այդ շրջագայությունն ապահովող տրանսպորտային միջոցի տեսակը, դասը)

1.2.3. Կատարողը պարտավորվում է Զբոսաշրջիկի տեղաբաշխման (տեղավորման) վայրում, այն է՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտում և/կամ շրջագայության ընթացքում, այդ թվում՝ միջանկյալ գիշերակացի վայրում ապահովել սննդի կազմակերպումը և մատուցումը ըստ հետևյալ պայմանների՝

(մանրամասն նշվում է սննդի մատուցման հաճախականությունը (նախաճաշ, միջանկյալ ճաշ, (lunch), ճաշ և ընթրիք՝ ըստ ժամերի՝ առանց ճաշացանկի (մենյուի) մանրամասնեցման)

1.3. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Ծառայությունների մատուցման ժամկետն է _____ թթ.:

1.4. Զբոսաշրջիկի հետ միասին Պայմանագրի 1.2. կետում նշված ծառայություններից օգտվելու են նաև Զբոսաշրջիկի ընտանիքի անդամ հանդիսացող հետևյալ անձինք՝

(նշվում է Զբոսաշրջիկի ընտանիքի անդամ հանդիսացող և Պայմանագրի 1.2. կետում նշված Ծառայություններից օգտվող անձանց անունը, ազգանունը, անձնագրային տվյալները և հասցեն)

1.5. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Ծառայությունները մատուցված են համարվում, եթե 1.3. կետով նախատեսված ժամկետի ավարտից 3 աշխատանքային օրվա ընթացքում Զբոսաշրջիկի կողմից գրավոր պահանջներ չեն ներկայացվում Ծառայությունների որակի և կամ Ծառայությունների չմատուցման մասով:

2. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է _____ ՀՀ դրամ, որից հյուրանոցային ծառայության մեկ գիշերակացի արժեքը՝ _____ ՀՀ դրամ (ներառյալ բոլոր տեսակի հարկերը և տուրքերը):

2.2. Սույն պայմանագրի 2.1. կետով նշված Ծառայությունների արժեքը Կատարողի կողմից կարող են միակողմանիորեն ավելացվել, պայմանով, որ Կատարողը պարտավոր է փաստաթղթերով հիմնավորել Պայմանագրի աճը, որն իր հերթին կարող է վերաբերել միայն տրանսպորտային ծախսերին ՀՀ օրենքով սահմանված հարկային գանձումներին:

2.3. Պայմանագրում նշված գինը չի կարող աճել մեկնման ժամկետին նախորդող 20 օրվա ժամանակահատվածում:

2.4. Զբոսաշրջիկի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է Պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու կամ դրամարկղ կանխիկ վճարելու միջոցով:

2.5. Զբոսաշրջիկը պարտավոր է Ծառայությունների դիմաց վճարել Պայմանագրի 2.1. կետում նշված գինն համապատասխան Պայմանագրի ստորագրման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում կամ ամենամսյա պարբերականությամբ, բայց ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Կատարողը պարտավոր է՝

3.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով,

3.1.2 Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով՝ Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում,

3.1.3. Զբոսաշրջիկի պահանջով առավելագույնը մեկ օրվա ընթացքում անհատույց վերացնել առաջացած բոլոր թերությունները:

3.2 Զբոսաշրջիկը ժամանակավոր բնակության և տարանցման վայրերում իրավունք ունի

- 3.2.1. Ստանալ Պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված համալիր Ծառայությունները:
- 3.2.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:
- 3.2.3. Իր համար հասկանալի լեզվով Կատարողից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն ժամանման երկրի (վայրի)՝ գրոսաշրջության հետ առնչվող օրենքների և բնակվելու կանոնների տեղաբնակների սովորությունների, հասարակական և կրոնական ծիսակատարությունների, վարքագծի կանոնների, մշակութային, հնագիտական, ճարտարապետական, պատմական և բնական արժեքների, ապահովագրության պայմանների, սույն պայմանագրի պայմանների մասին:
- 3.2.4. Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:
- 3.3. Զբոսաշրջիկը ժամանակավոր կեցության և տարանցիկ վայրերում պարտավոր է՝
- 3.3.1. Պահպանել պայմանագրով նախատեսված պայմանները և կանոնները:
- 3.3.2. Հարգել ժամանման երկրի (վայրի) ավանդույթները, սովորույթները, կրոնական հավատալիքները:
- 3.3.3. Չխախտել հասարակական կարգը, պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները:
- 3.4. Ժամանակավոր կեցության և տարանցիկ վայրերում Զբոսաշրջիկը պատասխանատվություն է կրում գտնվելու վայրի օրենսդրությամբ սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

4. Կողմերի պատասխանատվությունը

- 4.1 Կատարողի կողմից Պայմանագրում նշված Ծառայությունները Պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում չմատուցելու դեպքում Կատարողը Զբոսաշրջիկին վճարում է միանվագ տուգանք՝ Պայմանագրի 2.1. կետում նշված գումարի _____ տոկոսի չափով:
- 4.2. Պայմանագիրը վաղաժամկետ դադարելու կամ Զբոսաշրջիկի կողմից պայմանագրով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում՝ Զբոսաշրջիկի նկատմամբ կարող է կիրառվել տուգանք.
- ա. պայմանագրի գնի **մինչև քսանհինգ տոկոսի** չափով, եթե Զբոսաշրջիկը պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ.
- բ. պայմանագրի գնի **մինչև հիսուն տոկոսի** չափով, եթե Զբոսաշրջիկը պայմանագրից հրաժարվել է սույն կետի «ա» պարբերությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ, կամ ընդհանրապես չի օգտվել պայմանագրով նախատեսված ծառայություններից և առկա է հյուրանոցային ծառայություն մատուցող անձի գրավոր ծանուցումը Կատարողին Զբոսաշրջիկի կողմից հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

Սույն Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է Անհաղթահարելի ուժի ազդեցություն հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 15 օրացուցային օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը, այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

- 7.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:
- 7.2. Հյուրանոցային, տրասպորտային և այլ Ծառայությունները կարող են մատուցվել այլ կազմակերպությունների և/կամ անձանց կողմից (ծառայությունների մատակարարների), որոնց հետ Կատարողը ունի համագործակցության պայմանագրեր: Համագործակցության պայմանագրով մատուցվող ծառայությունների անպատշաճ կամ ոչ լրիվ կատարման համար պատասխանատվություն են կրում համագործակցության պայմանագրով ծառայություն մատուցող կողմը:
- 7.3. Սույն Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է Պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԱԶ «Գառնիկ Ուլիխանյան»

ՀՎՀՀ՝ 66873687

Հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն 2, ՔՇՀ 3, 8/6

«Արարատբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ

Հ/Հ 1510022035610100

ստորագրություն

ստորագրություն